Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Հացիկի Ավ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ում.

մաթեմատիկա -13ժամ
հայոց լեզու և գրակ. - 10ժամ
անգլերեն-9ժամ
գերմաներեն-18ժամ

առարկաների ուսուցչի թափուր տեղերը: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակը վերադարձնում: Եթե ներկայացված ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 25. 11. 2025թ-ից մինչև 08. 12. 2025թ-ը ներառյալ,ամեն օր, ժամը՝ 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ-ի դեկտեմբերի 11-ին, ժամը՝ 14:00-ին ՀՀ Արմավիրի Մարզի «Հացիկի Ավ. Բաղդասարյանի անվան միջն դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե Արմավիրի մարզ, գ. Հացիկ, 1-ին փողոց, 26 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել 098 43 83 84 հեռախոսահամարով: